

ՀՈԳԵԳԱՎՈՒՄՏԷՆ ԵՏՔ ԵՐՐՈՐԴ ԿՐՐԱԿ

01 ՅՈՒՆԻՍ 2008

Կիրակնօրեայ ընթերցումներ	Էջ 1
Բացատրութիւն	Էջ 2
Անբրտութիւն	Էջ 4
Սերտողութիւն Մատթէոսի	Էջ 4
Ժամանակացոյց եւ Ծանուցում	Էջ 8

ԸՆԹԵՐՑՈՒՄ
ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐԳԷՆ
(1.2-15)

Լսէ՛, ո՛վ երկիրք, ահա՛նջ դիր, ո՛վ երկիր, որովհետեւ Տէրը կը խօսի. «Զաւակներ ծնայ եւ մեծցուցի, բայց անոնք զիս ուրացան: Նոյնիսկ եզր զինք պահողը կը ճանչնայ, էշը գիտէ իր տիրոջ մտուրը, բայց Իսրայէլ իր Տէրը չի ճանչնար, իմ ժողովուրդս չի հասկնար զիս»:

Ո՛վ մեղաւոր ազգ, անօրէնութեամբ լի ժողովուրդ, չար սերունդ, դո՛ւք, անօրէն զաւակներ: Լքեցիք Տէրը, բարկացուցիք Իսրայէլի Սուրբը, օտարացաք եւ կռնակ դարձուցիք: Չի՞ բաւեր ձեր ստացած հարուածը, որ տակաւին կը շարունակէք ձեր մեղքերուն մէջ մնալ: Ահա հիւանդ էք զլիսովին եւ տրտում էք սրտովին. վէրքով, ուռեցքով ու թարախալից պալարներով ծածկուած էք, որոնք կը մնան առանց սպեղանիի, ձէթի կամ վիրակապի:

Ձեր երկիրը աւերակ դարձած է, ձեր քաղաքները հրկիզուած, ձեր աչքին առջեւ օտար ազգեր կ'աւարեն, կ'աւերեն ու կը կործանեն ձեր աշխարհը: Սիոնի դուստրը՝ Երուսաղէմը միայն մնացեր է, այն ալ պաշարուած ու լքուած, նման՝ կութքէն վերջ այգիին մէջ լքուած պահապանի հիւղակին, կամ սեխաստանին մէջ թողուած մրգապահներու ծածկին: Եթէ Երկնային Զօրքերու Տէրը մեզմէ մնացորդներ պահած չըլլար՝ Սողոմի կամ Գոմորի նման կորսուած պիտի ըլլայինք: Լսեցէ՛ք Տիրոջ խօսքը, ո՛վ Սողոմի իշխաններ, Աստուծոյ օրէնքներուն ահանջ տուէք, ո՛վ Գոմորի ժողովուրդ. այսպէս կ'ըսէ Տէրը.

«Ի՞նչ կ'արժեն ինծի ձեր բազմաթիւ զոհերը. ա՛լ զզուեցայ ձեր խոյերու ողջակէզներէն եւ պարարտ անասուններու ճարպէն: Ձեմ ուզեր գառնուկներու, ցուլերու եւ նոխազներու արիւնը: Ո՞վ պահանջեց ձեզմէ այս բաները, իմ ներկայութեանս գալու համար. ո՞վ ուզեց որ

այդպէս ոտք կոխէք իմ գաւթներէս ներս: Զուր տեղ նուէրներ մի՛ բերէք ինծի այլեւս. ձեր ծխած խունը պիղծ է ինծի համար: Ձեմ կրնար տանիլ նորալուսնի նուիրած ձեր տօները, Շաբաթներն ու կրօնական հաւաքոյթները. ձեր տօնախմբութիւնն իսկ անօրէնութիւն է: Կ'ատեմ ձեր նորալուսնի եւ այլ տօները. զգուած եմ ձեզմէ, ա՛լ պիտի չներեմ ձեր մեղքերը: Երբ աղօթքի համար ձեր ձեռքերը բարձրացնէք՝ պիտի չնայիմ ձեզի. նոյնիսկ եթէ ձեր աղօթքները բազմացնէք՝ պիտի չլսեմ ձեզ, որովհետեւ ձեր ձեռքերը արիւնով ծածկուած են»:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ
ՀՌՈՄԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԷՆ
(6.12-23)

Աձեր մահկանացու մարմիններուն մէջ, զանոնք իր ցանկութեանց հնազանդեցնելով: Մեղքին անձնատուր մի՛ ըլլաք, ձեր անդամները անիրաւութեան գործիք դարձնելով, այլ որպէս մահուանէ կեանքի եկած մարդիկ՝ դուք ձեզ Աստուծո՛յ յանձնեցէք եւ ձեր մարմինները Աստուծոյ ձեռքին մէջ արդարութեան գործիք դարձուցէք: Մեղքը ձեր վրայ պէտք է իշխէ, քանի դուք օրէնքին ենթակայ չէք, այլ շնորհքին:

Ուրեմն՝ ի՞նչ. քանի շնորհքին ենթակայ ենք եւ ո՛չ օրէնքին, մե՞ղք գործենք: Բնա՛ւ երբեք: Լաւ գիտցէք, թէ որո՛ւ ծառայութեան որ նուիրուիք եւ հնազանդիք՝ անոր ծառան եղած կ'ըլլաք: Մեղքին ծառայելով՝ մահուան կ'ենթարկուիք, մինչ Աստուծոյ հնազանդելով՝ կ'արդարանաք: Գոհութի՛ւն Աստուծոյ, որ թէպէտ ժամանակ մը մեղքին ծառայ դարձած էիք, բայց որովհետեւ սրտանց հնազանդեցաք ձեզի աւանդուած վարդապետութեան օրինակին, մեղքի տիրապետութենէն ազատեցաք եւ արդարութեան ծառայ դարձաք: Ծառայի օրինակով կը խօսիմ,

... որպէս մահուանէ կեանքի եկած մարդիկ՝ դուք ձեզ Աստուծո՛յ յանձնեցէք եւ ձեր մարմինները Աստուծոյ ձեռքին մէջ արդարութեան գործիք դարձուցէք:

որովհետեւ այդպէս աւելի հասկնալի է ձեզի: Ինչպէս որ ժամանակ մը ձեր մարմինները անօրէնութեան տուած՝ պղծութեան եւ անօրէնութեան կը ծառայէիք, այնպէս ալ հիմա սրբութեան տուէք ձեր մարմինները եւ արդարութեան ծառայեցէք: Երբ

...մեղքից վարձատրութիւնը մահ է, մինչ Աստուած որպէս ձրի պարգեւ՝ յաւիտեանական կեանք կու տայ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի միջոցաւ:

մեղքին ծառան էիք, հետեւ էիք արդարութեանէն: Ի՞նչ շահեցաք այն ժամանակուան ձեր գործերէն, որոնցմէ կ'ամչնաք հիմա. որովհետեւ անոնց հետեւանքը մահ է: Բայց հիմա մեղքին տիրապետութեանէն ազատ էք եւ Աստուծոյ ծառաներն էք: Զեր շահը սրբութեան նուիրուած

կեանք մըն է, որուն արդիւնքը պիտի ըլլայ յաւիտեանական կեանքը: Որովհետեւ մեղքին վարձատրութիւնը մահ է, մինչ Աստուած որպէս ձրի պարգեւ՝ յաւիտեանական կեանք կու տայ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի միջոցաւ:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՆՈՍԻ (12.1-8)

Շաբաթ օր մը Յիսուս արտերուէն մէջէն կ'անցնէր: Աշակերտները անօթեցած ըլլալով սկսան հասկ փրցնել եւ ուտել: Երբ փարիսեցիները ասիկա տեսան, ըսին Յիսուսի. «Տե՛ս, աշակերտներդ ի՛նչ կ'ընեն. բան մը որ արգիւտուած է Շաբաթ օրով ընել»: Յիսուս պատասխանեց. «Չէ՞ք կարդացած թէ ի՛նչ ըրաւ Դաւիթ, երբ ինք եւ իր հետ եղողները անօթեցան: Աստուծոյ տունը չմտա՞ւ եւ Առաջաւորութեան հացը չկերա՞ւ, որ օրէնքին համաձայն միայն քահանաներուն արտօնուած էր եւ ո՛չ թէ իրեն կամ իր հետ եղողներուն: Կամ չէ՞ք կարդացած Մովսէսի Օրէնքին մէջ, թէ Շաբաթ օրեր քահանաները

տաճարին մէջ կը սրբապղծեն Շաբաթը սակայն ատիկա մեղք չի համարուիր իրենց: Ահա կ'ըսեմ ձեզի, որ

Ողորմութիւն կ'ըզգեմ եւ ոչ թէ զոհ:

տաճարէն աւելի մեծ մէկը կայ հոս: Եթէ իրապէս հասկնալիք թէ ի՛նչ կը նշանակէ մարգարէին խօսքը. “Ողորմութիւն կ'ըզգեմ եւ ոչ թէ զոհ”, այն ատեն չէիք գատապարտեր անմեղները, որովհետեւ մարդու Որդին Տէրն է Շաբաթի

ՀՈԳԵԳԱԼՈՒԲՍԷՆ ԵՏՔ Գ. ԿԻՐԱԿԻ (ԾԽԱԿԱՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆԵՐ - ԹԻ 19)

ԺԹ ԿԻՐԱԿԻ ՅԱՐՈՒԹԵԱՆ

I

«ՀԱՌՈՂՔԻՆ ԵԱԹԱԿԱՅ ԵՆՔ» (Ա)

Սիրելի ընթերցող, այս առիթով յարմար տեսայ շնորհքի Աստուածաշնչական հասկացողութեան մասին գրել: Ինչպէ՞ս հասկցուած է անիկա:

Հին Կտակարանին մէջ «շնորհք» բառը առաջին անգամ կը տեսնուի Ծնունդներու Գիրքի 6.8-ին մէջ: Այնտեղ գրուած է. «Բայց Նոյ Տիրոջ առջեւ շնորհք գտաւ»: Ի՞նչ է այս շնորհքը եւ ինչի՞ շնորհք է: Կանխող երեք համարները մեզի կ'ըսեն, թէ Աստուած կը տեսնէ, որ երկրի վրայ մարդոց չարութիւնը կը շատնայ, եւ անոնց բոլոր մտածումները չար են: Ան կը զղջայ մարդը ստեղծելուն համար, եւ կ'որոշէ բնաջնջել «մարդէն մինչեւ անասունները եւ սողունները ու երկինքի թռչունները»: Ասոնք յայտնելէ հտք է, որ ըսուած է՝ Նոյի շնորհք գտնելը Տիրոջ առջեւ: Ապա պատմուած է տապանին շինութիւնը եւ ջրհեղեղը: Հետեւաբար այս «շնորհք գտնել»-ը կը նշանակէ, թէ Աստուած գթաց Նոյի եւ խնայեց անոր: Այս շնորհքը փրկութեան համար է:

Աստուծմէ «թափուող» շնորհքը այն գորութիւնն է, որ մեղքէ ու պղծութենէ կը մաքրէ աղօթող մարդիկը, ինչպէս ըսած է Զաքարիա մարգարէ (Հմմտ Զք 12.10, 13.1): Կամ ինչպէս Առակներու Գիրքին մէջ գրուած է՝ «զիս գտնողը կեանք կը գտնէ ու Տիրոջմէ շնորհք կը ստանայ» (Առ 8.35): Ըսել ուզուածը այն է, թէ ան որ Աստուծոյ երկիւղին վրայ հաստատուած իմաստութիւնը կը գտնէ՝ կեանք կը գտնէ: Տիրոջ տուած շնորհքը՝ այդ կեանքն է:

«Շնորհք» բառը գործածուած է նաեւ մարդկային փոխարարութեան ծիրի մէջ: Օրինակ Աբրահամի եւ Աբիմէլէքի պատմութեան մէջ, որ տրուած է Ծնունդներու Գիրքի 20-րդ գլուխով, Աբրահամ իր կիներ Սառան՝ իբր իր քոյրը ներկայացուցած ըլլալուն համար՝ Աբիմէլէքի կը բացատրէ եւ կ'ըսէ. «Երբ Աստուած զիս իմ հօրս տունէն օտարութեան հանեց, ըսի անոր (այսինքն՝ Սառայի).- Ինծի ընելիք շնորհքդ այս ըլլայ. ուր որ երթալու ըլլանք, հոն ինծի համար ըսէ՛ թէ՛ իմ եղբայրս է» (Ծն 20.13): Այստեղ «շնորհք» բառը ունի բարիքի կամ օգնութեան իմաստ:

Նկատի ունենալով, որ «շնորհք» բառին լայնագոյն գործածութիւնը Նոր Կտակարանեան է, եւ յատկապէս Պօղոսեան, ուրեմն հոն երթանք:

Ըսեմ որ Մատթէոսի, Մարկոսի, Յովհաննէսի Ընդհանրական Ա. եւ Գ. Նամակներուն, եւ Յուդայի Ընդհանրական Նամակին մէջ չենք տեսներ բառը: Յովհաննէսի Ընդհանրական Բ. Նամակին մէջ մէկ անգամ կը տեսնենք (Բ ՅՎ հմր 3), եւ Յակոբոսի, Բ Պետրոսի

Ընդհանրական Նամակներուն ու Յայտնութեան Գիրքին մէջ՝ երկուքական անգամ (Յկ 4.6, Բ. Պտ 1.2, 3.18, Յյտ 4.4, 22.21): Երեք անգամ Յովհաննէսի աւետարանին մէջ եւ բոլորն ալ՝ Նախաբանին: Վեց անգամ Ղուկասի աւետարանին մէջ. որոնցմէ երկրորդը, երրորդը, չորրորդը, հինգերորդը եւ վեցերորդը Նոր Աշխարհաբար Թարգմանութեան մէջ վերածուած են՝ սիրելի ըլլալ, արժանիք ունենալ, բարիք ընել իմաստներուն (Ղկ 2.40 եւ 52, 6.32-34, 7.4): Ութ անգամներ Եբրայեցիներու Նամակին մէջ (Եբր 2.9, 4.16, 10.29, 12.15, 13.9 եւ 25): Տասը անգամներ Պետրոսի Ընդհանրական Ա. Նամակին մէջ (Ա Պտ 1.2 եւ 10 եւ 13, 2.19 եւ 20, 3.7, 4.10, 5.5, 5.10 եւ 12): Եւ 17 անգամներ Առաքելներուն Գործերը գիրքին մէջ (Ա Գ 2.47, 4.33, 6.8, 7.10 եւ 46, 11.23, 13.43, 14.3 եւ 25, 15.11 եւ 40, 20.24, եւ 32, 24.27, 25.3 եւ 9): Պօղոս առաքելի կողմէ չգրուածներուն մէջ «շնորհք» բառին գործածութեան 51 անգամներ կը հանդիպինք: Իսկ առաքելին կողմէ գրուածներուն մէջ՝ 101 անգամներ: Ինչ որ ցոյց կու տայ, թէ Պօղոս առաքելի մօտ է, որ շնորհքի հասկացողութիւնը խորաչափուած է: Յաջորդ առիթով Պօղոսեան շնորհքի վարդապետութեան պիտի անդրադառնամ, իսկ այստեղ պիտի բաւարարուիմ Յովհաննէսի եւ Ղուկասի աւետարաններէն, Եբրայեցիներու Նամակէն, Պետրոսի Ա. Նամակէն եւ Առաքելներու Գործերը գիրքէն քաղուածքներով.

ա.- «Եւ Բանը մարմին եղաւ եւ մեր միջեւ բնակեցաւ, եւ մենք տեսանք անոր փառքը. փառքը Միածինին, որ Հօրմէն եկաւ՝ շնորհքով եւ ճշմարտութեամբ» (ՅՅ 1.14):

բ.- «Անոր լիառատ շնորհքէն է, որ մենք բոլորս շնորհքի վրայ շնորհք ստացանք» (Նոյն, 16):

գ.- «Ի՞նչ արժանիք կ'ունենաք՝ եթէ սիրէք միայն ձեզ սիրողները. մեղաւորներն ալ կը սիրեն իրենց սիրելիները» (Ղկ 6.32): Գրաբարը յունարէն բնագրին հետեւելով կ'ըսէ. «գիր՞նչ շնորհ է ձեր եւայլն»:

դ.- «Տեսակ-տեսակ օտարոտի ուսուցումներէ մի՛ տարուիք: Լաւ է որ սիրտը Աստուծոյ շնորհքով ամրապնդուի, քան՝ ուտելիքներու եւ չուտելիքներու վերաբերող կանոններով, որոնց հետեւողները որեւէ բանով չօգտուեցան» (Եբր 13.9).

ե.- «Այս փրկութիւնն էր որ փնտռեցին եւ փորձեցին հասկնալ մարգարէները, որոնք ձեզի տրուելիք շնորհքին մասին մարգարէանալով՝ կը փորձէին հասկնալ՝ թէ ի՛նչ ժամանակ եւ ի՛նչ պարագաներ կը ծանուցանէր իրենց մէջ գործող Քրիստոսի Հոգին» (Ա. Պտ 1.10-11):

զ.- «Հետեւաբար միտքով պատրաստ եւ արթուն եղէք, ձեր ամբողջ յոյսը կապած փրկութեան պարգեւին, որ ձեզի պիտի տրուի՝ երբ Յիսուս Քրիստոս յայտնուի» (Նոյն, 1.13):

է.- «Աստուծոյ մէկ շնորհքն է, երբ Աստուծոյ կամբքը գիտնալով՝ մարդ կը համբերէ անիրաւ տեղ կրած նեղութիւններուն» (Նոյն, 2.19):

ը.- «Ձեզմէ իւրաքանչիւրը իբրեւ Աստուծոյ բազմատեսակ պարգեւներուն իրաւ տնտես՝ իր ստացած շնորհքը ուրիշներուն թող մատակարարէ» (Նոյն, 4.10):

թ.- «Համարձակութեամբ կը քարոզէին՝ վստահելով Տիրոջ, որ իր շնորհքին քարոզութեան վկայութիւն կու տար՝ անոնց ձեռքով նշաններ ու հրաշքներ կատարելով» (Ա Գ, 14.3):

II

Օրուայ Ա. Գրային ընթերցումները. Եսայի մարգարէէն՝ 1.2-15: Պօղոս առաքելի Հռոմէացիներուն Նամակէն՝ 6.12-23: Մատթէոսի աւետարանէն՝ 12.1-8:

Առաջին ընթերցումը: Աստուած կը յայտարարէ իր ընտրած ժողովուրդին կողմէ ուրացուիլը: Հակառակ որ Ան իբր գաւակներ ծնած եւ մեծցուցած էր զանոնք, բայց անոնք չէին ճանչնար Տէրը: Անոնք դարձած էին մեղաւոր ազգ, «անօրէնութեամբ լի ժողովուրդ»: Իրենց մեղքերուն պատճառով անոնք հարուած ստացած էին, բայց կը շարունակէին մեղքերուն մէջ մնալ: Աստուած կը մերժէ ընդունիլ իր «չար սերունդ» ժողովուրդին բազմաթիւ զոհերը, նուէրները եւ բոլոր «կրօնական հաւաքոյթները»:

Երկրորդ ընթերցումը: Առաքելը կոչ կ'ուղղէ մեղքին անձնատուր չըլլալու, այլ Աստուծոյ յանձնուելու եւ սեփական մարմինները «Աստուծոյ ձեռքին մէջ արդարութեան գործիք դարձնելու»: Քրիստոսով՝ շնորհքին ենթակայ են հաւատացեալները: Բայց ատիկա չի նշանակեր, թէ մեղքին ծառայելով շնորհքին ենթակայ կրնան մնալ: Շնորհքին ենթակայութիւնը՝ Աստուծոյ հնազանդ ըլլալ կը պահանջէ: Մեղքին ենթակայութիւնը մահ կը բերէ, իսկ շնորհքինը՝ յաւիտենական կեանք:

Երրորդ ընթերցումը: Աւետարանիչը կը պատմէ, թէ Շաբաթ օր մը Յիսուս արտերուն մէջէն կ'անցնէր, եւ աշակերտները անօթեցած ըլլալով կը սկսէին հասկեր փրցնել եւ ուտել: Փարիսեցիները ասիկա տեսնելով՝ Յիսուսի ուշադրութեան կը յանձնէին աշակերտներուն ըրածը, որ ըստ իրենց աշխատիլ էր եւ Շաբաթը սուրբ պահելու աւանդութիւնը կը բեկանէր: Ասոր վրայ Յիսուս անոնց կը յիշեցնէր Դաւիթի Առաջաւորութեան հացը ուտելու օրինախախտումը: Նաեւ կ'ուղղէր անոնց հասկցնել՝ թէ քահանաներ Շաբաթ օրով որպէսզի պաշտամունք կատարեն՝ կ'աշխատին, հետեւաբար փարիսեցիական հասկացողութեամբ «կը սրբապղծեն» Շաբաթը: Ապա Յիսուս յստակօրէն անոնց կ'ըսէ, թէ Աստուած ոչ թէ պաշտամունքներով եւ կամ պաշտամունքային կանոններու գործադրութեամբ հետաքրքրուած է, այլ՝ ողորմութեամբ: Յիսուսի խօսքին մէջ՝ ողորմութիւն ունենալ կը նշանակէ անմեղները չղատապարտել, որովհետեւ Աստուած անոնց հետն է:

Երեք ընթերցումներուն միտք բանիւ այն է, թէ Աստուծոյ ժողովուրդը ըլլալը կրօնական պարտաւորութիւնները կատարեալ կերպով ընելուն մէջ չի կայանար, այլ՝ արդարութիւն ընելուն: Ասիկա ըսել չէ, թէ Աստուած պաշտամունք չ'ուզէր: Աստուած չ'ուզէր այն պաշտամունքը՝ որուն խորքին մեղքը կը բնակի: Աստուած կ'ուզէ այնպիսի պաշտամունք, որուն խորքին արդարութիւնը հաստատուած է: Արդարութիւնը երկու եզր ունի. ա.- սեփական անձերը մաքուր դարձնել, եւ բ.- նմանի հանդէպ արդար ըլլալ. երկուքն ալ նշան են Աստուծոյ կամքին հնազանդ ըլլալու:

սեփական անձերը մաքուր դարձնել, եւ նմանի հանդէպ արդար ըլլալ

Հովհ
ԳԸ

ԱՆԲՐՏՈՒԹԻՒՆ

«Ողորմութիւն կ'ուզեմ եւ ոչ թէ զոհ»¹:

Երկինքս ամպոտ է, Տէր:

Հոգիս տրամած՝
Ցօղիդ նորոգութեան կը տենչայ:

Կը հագուիմ ծիրանիս:

Կը ներկայանամ Քեզի
Զոհասեղանիդ մատուցելու
Մեզ իրարմէ բաժնող
Այլայլած զգայարաններս,
Մշտաբորբոք ցանկութիւններս,
Անյագ հանոյքս,
Պարարտ գրպանս,
Զգուելի տկարութիւններս,
Խակ յարաբերութիւններս,
Երկչոտ հաւատքս,
Ուղեմուտք վարքս,
Ամենագէտ ես-ս,
Մունչ երգս:

Երկմտանքս կը կրծէ զիս:
Ինքնաձաղկանքի կը պատրաստուիմ:
Վայրկեանը կ'երկարի...:
Վերջին աղօթք մը կը մրմրամ ու...
Զեռնդ կը սառեցնէ բիրտ թոնչքս:

Շունչ կը փչես ականջիս
Ու կը լսեմ Քեզ²:


«Ողորմութիւնդ կ'ուզեմ, զաւակս:
Սի'րտդ տուր Ինձի՝
Խոնարհ, գոշումնալից³:
Եթէ Ինձի զոհ պիտի մատուցանես՝
Երախտագիտութի'ւնդ ընծայէ⁴:
Մտերիմս եղիր.
Ճանչցի'ր Զիս⁵...:
Մնացեալը շնորհիքովս կը փոխակերպուի»:

Ձաղկիչս կ'իյնայ...
Ու սիրտս կը յորդի:
Լոյսիդ փայլատակումով Խաւարս կը հալածուի:
Ամպածրար Արեւուդ նառագայթը
Էութեանս կը հպի
Ու մօտալուտ մեր հանդիպումին տենդը
Կ'նոռգէ զիս:

Սիրոյ երկինքը ամպամած է.
Շուտով կ'անձրեւէ:

ՄԻՐԵՐԳԱՎ

1-Ող 6.6, Մտ 9.13, 12.7
2-Սղ 40.6
3-Սղ 51.17
4-Սղ 50.14
5-Ող 6.6



ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ ՄԱՏԹԷՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԻՆ

Հեղինակ՝ ԶԱՐԵՀ ԱՐՔ. Ա.ԶՆԱԻՈՐԵԱՆ
Խմբագիր՝ Գառնիկ Ք. Գ.

ՅԻՍՏԻՍ ԾՆՈՒՆԴ

«Այսպէս պատահեցաւ Յիսուս Քրիստոսի ծնունդը: Իր մայրը՝ Մարիամ, նշանուած էր Յովսէփի հետ, սակայն նախֆան ամուսնութիւնը Մարիամ յղի մնաց Ս. Հոգիէն:

Յովսէփ՝ անոր նշանածը, արդար մարդ մը ըլլալուն՝ չուզեց հանրութեան առջեւ խայտառակել զայն, այլ խորհեցաւ լռելեայն ետ ընել իրենց նշանախօսութիւնը: Մինչ այս մասին կը մտածէր, ահա Տիրոջ հրեշտակը երագի մը մէջ երեւցաւ իրեն եւ ըսաւ.- Յովսէփ, Դաւիթի՝ որդի, մի՛ վախնար ամուսնանալու նշանածիդ՝ Մարիամի հետ, որովհետեւ իր մէջ յղացուածը Ս. Հոգիէն է: Որդի մը պիտի ծնի եւ զայն պիտի կոչես Յիսուս, որովհետեւ ան իր ժողովուրդը իրենց մեղքերէն պիտի փրկէ:

Այս բոլորը պատահեցան, որպէսզի կատարուի այն ինչ որ Տէրը ըսաւ Եսայի մարգարէին միջոցով.- Ահա կոյսը պիտի յղանայ եւ որդի մը ծնի, եւ զայն պիտի կոչեն Էմանուէլ, որ կը նշանակէ՝ Աստուած մեզի հետ:

Երբ Յովսէփ արթնցաւ, կատարեց ինչ որ Տիրոջ հրեշտակը հրամայեց իրեն եւ ամուսնացաւ իր նշանածին՝ Մարիամի հետ. բայց չյարաբերեցաւ անոր հետ, մինչեւ որ իր անդրանիկ զաւակը ծնաւ, եւ զայն Յիսուս կոչեց» (1.18-25):

Ի՞նչ է այս զրուակին նպատակը: Յիսուսի բացառիկ ծնունդը ըլլալը ցոյց տալ: Ո՛չ: Այլ՝ մարդկային կամքով, մարդկային մերձեցումով

ծնունդը չըլլալը: Դրուագը մեզի կ'ըսէ, թէ Յիսուսի ծնունդը Աստուծո՞ւմ է, Ս. Հոգիին միջոցով:

Մարիամ նշանուած էր Յովսէփի, երբ Ս. Հոգիէն յղի մնաց: Ըստ եբրայական ավանդութեան, հրեայ աղջիկներ շատ կանուխ՝ 12 տարեկանին կրնային նշանուել:

Ամուսնութեան առաջին հանգրուանն էր նշանախօսութիւնը: Քանի մը ամիսներու կամ տարուայ մը ժամանակէ ետք, նշանուած աղջիկը իր ապագայ ամուսինին տունը կը տարուէր, եւ երբ սկսէին

իրարու հետ ապրիլ՝ պաշտօնապէս ամուսնացեալ կը համարուէին: Թէ Մարիամ քանի՞ տարեկան էր նշանուած ատեն, չենք գիտեր, բայց շատ հաւանական է, որ պարմանութեան սեմին էր:

Յովսէփ յանկարծօրէն կ'իմանայ, թէ իր նշանածը յղի էր: Արդար հոգին բրտօրէն կը սկսի տանջուիլ. իր նշանածին վրայ կասկածը եւ դառնութիւնը սրտին, կը կորսնցնէ հանգիստ եւ քուն: Կ'որոշէ չեղեալ համարել նշանախօսութիւնը եւ Մարիամին արձակման թուղթ տալ: Ուրկէ՞ եւ ինչպէ՞ս կրնար գիտնալ, թէ Աստուծոյ յատուկ ընտրութեամբ է, որ Մարիամ որոշուած էր ըլլալու մայրը Աստուածորդիին: Ուրկէ՞ եւ ինչպէ՞ս պիտի գիտնար, թէ Մարիամ Աստուծոյ Հոգիին ներգործութեամբ յղի մնացած էր, եւ որովայնին մէջ կը կրէր անիկա՝ որ Աստուծո՞ւմ խոստացուած էր: Ուրկէ՞ եւ ինչպէ՞ս պիտի գիտնար, թէ Աստուծոյ փրկագործութեան խորախորհուրդ ծրագրին մէջ՝ Աստուած յատուկ եւ կարեւոր դեր մը վերապահած էր նաեւ իրեն, որուն շառաւիղէն Աստուած պիտի վերականգնէր Դաւիթի անկեալ թագաւորութիւնը, մարմնաւորը փոխարինելով հոգեւոր թագաւորութեամբ:

Աւետարանիչը Յովսէփի համար՝ «արդար մարդ» ըսած է: Շատ կարեւոր որակում մըն է ասիկա: Ի՞նչ կը նշանակէ սակայն: Ո՛չ միայն յանցանքէ կամ մեղքէ զերծ, այլ նաեւ ու մանաւանդ՝ բարի, աստուածավախ եւ բարեգործ. այսինքն՝ Աստուծոյ օրէնքին հաւատարիմ հետեւողութեամբ՝ իրաւունք եւ արդարութիւն ընող ուրիշներուն, մանաւանդ տկարին ու անպաշտպանին, եւ միւս կողմէ՝ գերագոյն արդարութիւնը Աստուծո՞ւմ սպասող, աչքերը Աստուծոյ փրկութեան յառած, անոր ակնդէտ սպասումով: Նոյնիսկ հրեշտակէն լուսաբանութիւն ստանալէն առաջ, «արդար մարդ մը ըլլալուն՝ չուզեց հանրութեան առջեւ

խայտառակել Մարիամը, այլ խորհեցաւ լուելեայն ետ ընել իրենց նշանախօսութիւնը»: Անիրաւուած զգացած ատենն իսկ՝ չուզեց անիրաւութիւն ընել եւ մարդոց չարութեան նշաւակ դարձնել Մարիամը:

Տիրոջ հրեշտակը կու գայ եւ Յովսէփի միտքը կը խաղաղեցնէ, ու կը յայտնէ Մարիամի կատարեալ անբծութիւնը:

Այստեղ շեղում մը ընելով՝ հետաքրքրական հարցի մը կ'ըզեմ անդրադառնալ: Հրեշտակը յղացուածին համար փութացած էր Յովսէփի մօտ եւ իրողութիւնը յայտնած: Ասիկա կրնա՞յ ժամանակակից վէճի մը առնչութեամբ օգտակար ըլլալ մեզի: Վէճը կը վերաբերի վիժեցումի հարցին:

Մարդու մը կեանքը ե՞րբ կը սկսի: Կը սկսի յղացման վայրկեանէն, թէ ծնած վայրկեանէն: Պէ՞տք է թոյլատրել վիժեցումը, թէ ոչ: Անգամ մը որ յղութիւնը սկիզբ առած է, անգամ մը որ կեանքը սկիզբ առած է, թոյլատրելի՞ է վիժեցնելը, թէ ոչ: Եկեղեցիներ կան՝ որոնք բացարձակապէս դէմ են վիժեցման: Կարգ մը գիտնականներ, ինչպէս նաեւ կարգ մը եկեղեցականներ, պարզամիտ եւ ոչ թէ լայնախոհ, որոնք թեթեւօրէն կ'առնեն խնդիրը եւ որովայնի մէջ կազմաւորուել սկսածը՝ «կարելի չէ կեանք կոչել» կ'ըսեն, եւ իրենց առարկութիւնը շարունակելով կը պնդեն՝ թէ կեանքը մարդ էակի պարագային գիտակցական որակով է, որ կեանք կ'ըլլայ: Հետեւաբար,՝ կ'ըսեն,՝ չկազմաւորուած երեխային կեանքը՝ կարե-

լի չէ մարդկային կեանք համարել, ուստի՝ թոյլատրելի է վիժեցումը: Ե՞րբ է որ մարդ էակին կեանքը կը սկսի, որովայնային կազմաւորման ո՞ր հանգրուանին: Մատթէոսի 20-րդ համարը մեզի կը թելադրէ, որ յղացուած մը իր սկզբնական վիճակէն մինչեւ լոյս աշխարհ գալը՝ մարդկային կեանք մըն է: Արդեօք համարին թելադրածը կրնա՞յ օգտակար ըլլալ վիժեցման մասին եկեղեցւոյ կեցուածքը ճշդելու առնչութեամբ:

Վերադառնալով մեր բուն նիւթին, հրեշտակը Յովսէփի կը յայտնէ, ուրեմն, թէ Մարիամի որովայնին մէջ արդէն «ծնեալ է» ան՝ որ «իր ժողովուրդը իրենց մեղքերէն պիտի փրկէ»:

«Որդի մը պիտի ծնի եւ զայն պիտի կոչես Յիսուս»: Նկատի ունենալով որ օրէնքին առջեւ Յիսուս Յովսէփի որդին պիտի ըլլար, ուստի

...յղացուած մը իր սկզբնական վիճակէն մինչեւ լոյս աշխարհ գալը՝ մարդկային կեանք մըն է:

հրեշտակը Յովսէփի կ'ըսէ փոքրիկը անուանել: Բայց փոքրիկին անունը սկիզբէն որոշուած է, վերէն՝ երկինքէն որոշուած: Յովսէփի դերը Աստուծոյ կամքին հնազանդութիւն է:

Ի՞նչ կը նշանակէ՝ «ան իր ժողովուրդը իրենց մեղքերէն պիտի փրկէ»: Թէ անոնք իրենց մեղքերէն պիտի ազատին անոր միջոցով: Քրիստոս ինքն է իր ժողովուրդին փրկութիւնը: «Իր ժողովուրդը» խօսքը ինչպէ՞ս հասկնալ:

«Իր ժողովուրդը» Աստուծոյ ժողովուրդն է: Սակայն Քրիստոսի ժողովուրդը՝ Հին Կտակարանեան հասկացողութեամբ Աստուծոյ ժողովուրդը չէ: Քրիստոսի ժողովուրդը Աստուծոյ Նոր ժողովուրդն է: Հին Կտակարանի Աստուծոյ ժողովուրդը միջնորդներով (մարգարէ կամ քահանայ) կ'առաջնորդուէր: Նոր ժողովուրդին առաջնորդը՝ Աստուած ինքն է: Քրիստոսի ժողովուրդն է նորը. ինքն է անոր ստեղծիչը. Նոր ժողովուրդն է իրը:

«Այս բոլոր պատահեցան, որպէսզի կատարուի այն ինչ որ Տէրը ըսաւ Եսայի մարգարէին միջոցաւ. - Ահա կոյսը պիտի յղանայ եւ որդի մը ծնի, եւ զայն պիտի կոչեն Էմմանուէլ, որ կը նշանակէ՝ Աստուած մեզի հետ» (1.22-23):

Ինչպէս Ներածութեան մէջ նշած էի, Մատթէոս աւետարանիչ յատուկ մտահոգութիւնը ունի ցոյց տալու, թէ Հին Կտակարանի մարգարէութիւնները Յիսուսի անձով կ'իրականանան կամ իրենց լրումը կը գտնեն: Աւետարանիչը շուրջ 40 մէջբերումներ կը կատարէ Հին Կտակարանէն՝ անոնց կատարումը յայտնելու համար: Ունի նաեւ լռելեայն ազդեցութիւններ, այսինքն այնպիսիներ՝ որոնք բացայայտօրէն չեն ըսուած, եւ որոնց թիւը աւելի քան 100 է: Այսքան քանակով մէջբերումներ եւ ազդեցութիւններ յատկօրէն կը յայտնեն աւետարանիչին մտահոգութիւնը:

Եսայի մարգարէէն քաղուածը առաջինն է մէջբերումներու շարքին: Անիկա առնուած է մարգարէութեան 7-րդ գլուխէն: Հոն խօսքը ուղղուած է Աքազ թագաւորին: Մեր ունեցած մէջբերումը «կոյսը պիտի յղանայ», կ'ըսէ: Եբրայերէն բնագիրը «կոյս»ին համար ունի «ալմա» բառը, որ ամուսնանալու տարիքը ունեցող աղջիկ կամ երիտասարդ կին (ամուսին իմաստով) կը նշանակէ: Սակայն Աստուածաշունչին մէջ մեզի ծանօթ բոլոր օրինակներն ալ կարծէք

ան իր ժողովուրդը իրենց մեղքերէն պիտի փրկէ:

թէ կը թելադրեն, որ «ալմա»ն կուսական հասկացողութեամբ գործածուած է: Եթեանասնից թարգմանութիւնը, որ մէջբերումին աղբիւրն է, «ալմա»յին համար ունի «պարթենոս»ը: Սակայն յունարէն բառը «կոյս» կը նշանակէ: Եբրայերէնին հարազատ յունարէն համարժէքը «նէանիս» բառն է: Ինչո՞ւ այս ստուգաբանութիւնը: Որովհետեւ ոմանք կը պնդեն, թէ Եսայի մարգարէ «կոյս»ի մասին չէ խօսած, հետեւաբար մարգարէութիւնը չի կրնար Մարիամի վերաբերիլ: Սակայն աւելորդ առարկութիւն է անոնց ըրածը, որովհետեւ Մարիամ իբր նշանածը Յովսէփի՝ արդէն ամուսնութեան առաջին հանգրուանին մէջ գտնուող պարամուսնի մըն էր: Առաւել մարգարէական նախատեսութիւնը յստակ է. անիկա կ'ըսէ. «Տէրը ինք նշան պիտի տայ քեզի» (Ես 7.14): Եթէ մարգարէն սովորական կնոջ մը ծնանելիքին մասին խօսէր, ի՞նչ նշան պիտի ըլլար Տիրոջմէ տրուելիքը: Շատ բացայայտօրէն մարդկային սովորական կեանքէն կամ պայմաններէն տարբեր երեւոյթի մը մասին է մարգարէին ըսածը. նշանի մը՝ որ անըմբռնելի է: Առարկողները միայն կը կենան մարգարէական խօսքին մէկ եզրին վրայ, երբ կ'ըսեն թէ այս մարգարէութիւնը Աքազ թագաւորին տրուեցաւ, եւ զալիք ժամանակներուն չի վերաբերիր: Անոնք մասամբ իրաւունք ունին: Եւ անկասկած Աքազ թագաւորի օրով մարգարէութիւնը իրականացած է, եւ ան ժառանգորդ մը ունեցած է՝ իբր լրում կանխատեսութեան: Աքազ թագաւորի կատարուած խոստումին իրականացումով Աստուած իրեններուն հանդէպ իր օգնութիւնը կը ցուցաբերէր: Բայց մարգարէութեան այլ եւ բուն եզրն է, որ մեզի կը յայտնուի, երբ կ'ըսուի «ալմա»յի ծնանելիքին անունը. Էմմանուէլ:

Մարդկային միտքը չէր կրնար եւ չի կրնար իրարու մօտիկ բերել աստուծային բացարձակ սրբութիւնը եւ մեղսավարակ մարդկային բնութիւնը:

Աստուած իր ժողովուրդին հետ եղած էր թէ Աքազ թագաւորէն առաջ եւ թէ վերջ, եւ իր ժողովուրդին մէջ բնակած էր: Սակայն Յիսուսի ծննդեամբ պիտի գար մարմնաւորապէս բնակելու իր ժողովուրդին մէջ:

Էմմանուէլ՝ Աստուած մեզի հետ: Ծնելիք երեխան ինչպէ՞ս անհասանելի եւ անիմանալի Աստուծոյ կապուած էր: Ի՞նչպէս Աստուած

մեզի հետ պիտի ըլլար, մեր միջեւ պիտի ըլլար: Մարդկային միտքը չէր կրնար եւ չի կրնար իրարու մօտիկ բերել աստուածային բացարձակ սրբութիւնը եւ մեղսավարակ մարդկային բնութիւնը: Մարդկային

Քրիստոսի ծնունդը մարդուն եւ Աստուծոյ հանդիպումը պիտի չըլլար պարզապէս, այլ մարդուն եւ Աստուծոյ սերտ միութիւնը՝ անսկզբնական Բանին Աստուծոյ կատարեալ անձնաւորութեան մէջ:

միտքը չէր կրնար եւ չի կրնար միաժամանակ երկինքն ու երկիրը միախառնուած տեսնել անձի մը մէջ: Ահա այս է նշանը՝ որուն մասին Եսայի մարգարէն կը խօսէր: Յիսուսի ծննդեամբ Աստուած կու գար մեր մէջ բնակելու, մեզի պէս ըլլալու, մեզի հետ ըլլալու նաեւ մարմնաւորապէս:

Քրիստոսի ծնունդը մարդուն եւ Աստուծոյ

հանդիպումը պիտի չըլլար պարզապէս, այլ մարդուն եւ Աստուծոյ սերտ միութիւնը՝ անսկզբնական Բանին Աստուծոյ կատարեալ անձնաւորութեան մէջ:

«Երբ Յովսէփ արթնցաւ, կատարեց ինչ որ Տիրոջ հրեշտակը հրամայեց իրեն եւ ամուսնացաւ իր նշանածին՝ Մարիամի հետ. բայց չյարաբերեցաւ անոր հետ, մինչեւ որ իր անդրանիկ գաւակը ծնաւ, եւ զայն Յիսուս կոչեց» (24-25):


«Չյարաբերեցաւ» ին տեղ գրաբարը հետեւելով յունարէն բնագրին կ'ըսէ՝ «ոչ գիտէր»: «Գիտնալ» բայը Աստուածաշունչին մէջ գործածուած է կենակցիլ կամ զուգաւորուիլ իմաստով: Ծնունդներու գիրքին մէջ կը կարդանք. «Եւ Ադամ գիտցաւ իր Եւա կինը ու ան յղացաւ» (Ծն 4.1):

«Չյարաբերեցաւ անոր հետ, մինչեւ որ իր անդրանիկ գաւակը ծնաւ»: «Մինչեւ»ը ինչպէ՞ս հասկնալ: Անիկա սովորաբար կը նշէ ժամանակի կամ գործողութեան ժամանակի սահման մը: Բայց իմաստային այլ կարելիութիւն մըն ալ ունի՞: Արդեօ՞ք ըսուածը այն է, թէ մինչեւ Յիսուսի ծնիլը՝ Յովսէփ չմերձեցաւ Մարիամի, բայց անկէ ետք մերձեցաւ: Ո՛չ անպայման: Ի՞նչպէս: Աստուածաշունչէն օրինակ մը բերեմ՝ բացատրելու համար «մինչեւ»ը: Պօղոս առաքեալի Հռոմէացիներուն ուղղած նամակէն. ան գրած է. «Ադամէն սկսեալ մինչեւ Մովսէս մահը թագաւորեց» (Հռ 5.14): Այս նախադասութիւնը կը նշանակէ, թէ Մովսէսէն ետք ալ մեղքը դադարեցա՞ւ

թագաւորելէ մարդ էակին վրայ: Ուրեմն, Մովսէսի հետ, այսինքն՝ այն օրը որ Աստուած Օրէնքը տուաւ՝ մեղքը վերջացա՞ւ կամ մեղքին տիրապետութեան վե՞րջ դրուեցաւ: Անկասկած՝ ո՛չ: Մեղքը կը շարունակէ թագաւորել մարդկային կեանքին մէջ: «Չյարաբերեցաւ անոր հետ, մինչեւ որ իր անդրանիկ գաւակը ծնաւ» հաստատումը պէտք է ընկալուի այնպէս՝ թէ Յիսուսի ծնելէն ետք Մարիամի կուսութիւնը խախտեցաւ, այլ բացատրութեամբ՝ թէ Յովսէփ կողակցական կեանքով գաւակներ ունեցաւ Մարիամէ: Եթէ նոյնիսկ Աստուածաշունչը տեղեկութեամբ մը մեզի յայտնէր, թէ Յովսէփ Մարիամէ գաւակներ ունեցաւ՝ մեր հաւատալիքին հիմնական տարրին մէջ բան մը պիտի չփոխուէր: Բայց Նոր Կտակարանը մեզի ոչինչ կ'ըսէ այդ մասին: Հետեւաբար ոչ թէ կը ծածկէ իրականութիւն մը, ինչպէս ոմանք կը կարծեն, այլ պարզապէս կը հաստատէ Մարիամի այլ գաւակ կամ գաւակներ չունենալը Յովսէփին, եւ կոյս մնալը: Ուստի, զուր է վէճը կամ Աստուածամօր կուսութիւնը հերքելու ճիգը:

Նոյն մօտեցումով կարելի է հասկնալ «անդրանիկ գաւակը» խօսքը: Ոմանք կ'ըսեն՝ թէ «անդրանիկ» կը նշանակէ առաջին գաւակ, հետեւաբար կը թելադրէ այլ գաւակ կամ գաւակներ ալ: Աստուածաշունչէն օրինակ մը տամ՝ ցոյց տալու համար այդ առարկութեան անճշդութիւնը: Թագաւորներու Երկրորդ Գիրքին մէջ գրուած է. «Քերթնի մէջ Դաւիթի որդիներ ծնան ու անոր անդրանիկը Յեզրայելացի Աքիոնամէն ծնած Ամմոնն էր» (3.2): Գիտենք՝ որ Դաւիթի միւս գաւակները ուրիշ կիներէ էին: Ան Աքիոնամէն միայն մէկ գաւակ ունեցաւ: Ատով հանդերձ՝ Ամմոն գաւակը «անդրանիկ» կոչուած է: Մարիամի ուրիշ գաւակներ ալ ունենալուն մասին խօսողները Նոր Կտակարանեան տուեալի մը (տե՛ս Մտ 13.55: Հմմտ Մկ 6.3) վրայ թիւրօրէն կեցած կը պնդեն իրենց տեսակէտը: Սակայն յիշուած եղբայրները Յիսուսի զարմիկներ էին պարզապէս, գուցէ հօրեղբօրորդիներ:

(Շարունակելի 4)



**ՅԱԶՈՐԴ ՇԱՔԹՈՒՄ
ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅ**

Յինգշաքթի, 05 Յունիս 2008

11.00 > Աղօթածողով՝

Ս. ՅԱԿՈԲ քոյրերու ժողով

Շաքաթ, 07 Յունիս 2008

Տօն Գիւտի Նշխարաց Լուսաւորչի

18.30 > Ս. Գրային սերտողութիւն՝

Յայ երիտասարդներուն համար

Կիրակի, 08 Յունիս 2008

09.30 > Առաւօտեան ժամերգութիւն

11.00 > Ս. Էւ անմահ Պատարագ

**ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹՅՆ
eglise58@sourphagop.com**

Ս. ՅԱԿՈԲ ԸՈՅՐԵՐՈՒ ԺՈՂՈՎ

**ՊՏՈՅՏ ԴԷՊԻ
ՐԻԿՕ**

ԵՐԵՎԱՆԻ 10 ՅՈՒՆԻՍ 2007-Ի

ԱՌԱՄՕՏԵԱՆ ԺԱՄԸ 8.30-ԻՆ

ՍԵԿՆՈՒՄ ԵԿԵՂԵՑԻԷՆ

ՀԻՒԱՆՈՒՆԵՐՈՒ ԱՅԵԼՈՒԹԻՒՆ

Բարեհաճեցէք հեռաձայնել Արժ.

Տ. Գառնիկ Քինյ. Գոյունեանին.

514 331 5445 x203 կամ 514 909 5203 քիւիմ:

ՍՈՅՆ ԹԵՐԹԻԿԸ Ե-ՆԱԱՆՎՈՎ ԱՏԱՆԱՅԻՆ
ՀԱՄԱՐ ՁԵՐ Ե-ՀԱՍՅԷՆ ՈՒՊՈՒՐԿԵՅԷՔ
eglise58@sourphagop.com-ԻՆ

**ՀԱՄԱՅՆԵՐԱ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ
ԵԿԵՂԵՑԻՈՅ ԳՐԱՍԵՆՆԵԱԿԸ**

ԲՅՅ Է

ԵՐԿՈՒԷԱՔԹԵԱ ՈՒՐԲԱԾ

ԺԱՄԸ 8.30-ԷՆ 16.00

ՀԱՃԵՅԷ ԿԱՊՈՒԻԼ ԲԱՐՏՈՒԱՐԻՆ՝

514 331 5445 x202

ԿԱՄ ՀՈՎԻՐՆ՝

514 331 5445 x203

ԿԱՄ ԳՐԵԼ ՀԵՏԵԻՆԵԼ Ե-ՀԱՍՅԷՐՆ՝

eglise58@sourphagop.com

**ՀՈԳԵՀԱՆԳԱՏԵԱՆ ՁԵՐ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԵՐՈՆ ԱՆԽՕՐՕՔ
ԿԱՏԱՐԵՅԷ ԿԱՊՈՒԻԼՈՎ
ԵԿԵՂԵՑԻՈՅ ԳՐԱՍԵՆՆԵԱԿ**

**Ս. ՅԱԿՈԲ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ
28ՐԴ ՏԱՐԵՇՐՁԱՆԻ
ԱՄԱԿԵՐՁԻ ՅԱՆԴԵՍ**

ԿԻՐԱԿԻ

8 ՅՈՒՆԻՍ 2008

ԺԱՄԸ 13.30

**Ս. Յակոբ Վարժարանի
Բաստրմաճեան սրահ**

Յրաւեր՝ բոլորին:

Մանրամասնութեանց համար դիմել

Տնօրէնին՝ Պրն Թորոս Պապիկեանին

514 956 1277 կամ

director@sourphagop.org

կայքէջ՝

www.sourphagop.org